ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ 44 օրյա պատերազմը (2020)

Դպրոց՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ուսուցիչ՝ Ա. Ավագյան

Ղեկավար՝ Կ.Մարգարյան

2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախ՝ սոցիալ տնտեսական բարդ իրավիճակը Ադրբեջանում: Վերջին երկու տարվա ընթացքում նավթի գների աննախադեպ անկում է տեղի ունեցել Ադրբեջանում, որի եկամուտը 90 տոկոսով պայմանավարված է նավթի և գազի արդյունաբերությամբ, այդ պատճառով էլ Ադրբեջանական մանաթը երկու անգամ ենթարկվել էր դևալվացիայի՝ արժեզրկման: Այս ամենը լուրջ խնդիրներից մեկն էր:

Բնականաբար, պետք չէ մոռանալ նաև տարածաժրջանային համատեքստի մասին, այսինքն՝ Մերձավոր Արևելքի ճգնաժամի և ռուս-թուրքական հարաբերությունների իրավիճակի մասին, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախորդ տասնամյակների ընթացքում Ադրբեջանի կառավարությունը արեց ամեն հնարավորն ու անհնարինը՝ իրեն ծուղակի մեջ զցելով, ծայրահեղական հայտարարություններ տարածելով, թե՝ կամ ռազմական գործողությունները կվերսկսվեն, կամ հայկական կողմը պիտի գնա միակողմանի զիջումների: Իսկ սրանք, անշուշտ, գրկում էին իրական բանակցային գործընթացում մեր կողմից զիջումների գնալուց:

Մյուս կողմից վերջին երկու-երեք տարվա ընթացքում Ադրբեջանական կողմը նման ռազմատենչ գործողություններին ու հայտարարություններին զուգահեռ, ավելացնում էր նաև օգտագործվող զենքերի տեսակը և քանակն ու լարվածությունը շփման գծում, այսինքն՝ եթե մի քանի տարի առաջ մենք խոսում էինք դիպուկահարների պատերազմի մասին, հետո՝ հատուկ նշանակության զորքերի պայքարի իսկ հետագայում Ադրբեջանն անցավ ականների ու ականանետների գործողությունների, հրետանու և տանկերի կիրառման, ի վերջո առաջ եկավ այն իրավիճակը, որն ունեցանք սեպտեմբերին: Առավել ևս, որ տեսանելի չէր որևէ արտաքին դերակատարի սկզբունքային մոտեցում, ինչը կարող էր զսպել Ադրբեջանին:

Արդյունքում մենք ունեցանք մի իրավիճակ, երբ Սեպտեմբերի 27-ին վաղ առավոտյան ադրբեջանական կողմը դիմեց ռազմանակ գործողությունների, որոնք 1994 թվականից մինչև օրս ամենալայնածավալն էր:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ-ադրբեջանական պատերազմ, Արցախյան երկրորդ պատերազմ կամ 44-օրյա պատերազմ , պատերազմ Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև, որը սկսվել է սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի ռազմական ագրեսիայով և ավարտվել նոյեմբերի 10-ին Արցախի կապիտուլյացիոն համաձայնագրով: Արցախի Հանրապետությանը ռազմական աջակցություն է ցուցաբերել Հայաստանը, Ադրբեջանին՝ Թուրքիան: Պատերազմը 1988 թվականին

սկսված արցախյան հակամարտության վերջին էսկալացիան է, և ամենաարյունալին՝ առաջին պատերազմից հետո:

Մարտական գործողությունները ընթացել են արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով, ինչպես նաև հայ-ադրբեջանական շփման գծի որոշ հատվածներում: Մարտական գործողություններն սկսվել են սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 07:10: Ի պատասխան պատերազմի՝ Հայաստանում և Արցախում հայտարարվել է ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք: Ադրբեջանի որոշ շրջաններում սկզբում հայտարարվել է ռազմական դրություն և պարետային ժամ, ապա ընդհանուր զորահավաք:

2020 թվականի նոյեմբերի 10-ին կնքվեց խաղաղության պայմանագիր, ըստ որի Արցախի հանրապետության տարածքի մեծ մասը հանձնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ՝ ԼՂԻՄ-ի տարածքից դուրս բոլոր շրջանները բացառությամբ Լաչինի միջանցքը, Շուշի քաղաքը, Հադրութի շրջանի մեծ մասը, Ասկերանի և Մարտակերտի շրջանի որոշ գյուղեր, իսկ ԼՂՀ սահմանները պահպանում են ռուս սահմանապահները:

Պատերազմը նշանակալի դարձավ ԱԹՍ-ների, նորագույն տեխնիկայի և ծանր հրետանու լայնամասշտաբ ռազմական օգտագործմամբ և ինֆորմացիոն դաշտում պաշտոնական հակամարտությամբ՝ հանդես գալով ժամանակակից պատերազմի օրինակ: Ըստ Հայաստանի ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանի՝ ռազմական գործողությունների ինտենսիվությամբ և տեխնիկայի օգտագործման ծավալով պատերազմը համեմատելի է 2003թ. Իրաքյան պատերազմի հետ՝ ԱՄՆ-ի և Իրաքի միջև :

Բազմաթիվ երկրներ և միջազգային կառույցներ խստորեն դատապարտել են հակամարտությունը՝ երկու կողմերին կոչ անելով անհապաղ դադարեցնել կրակը և վերսկսել կառուցողական բանակցությունները:

Միջազգային վերլուծաբանները համակարծիք են, որ մարտերը սկսվել են ադրբեջանական գրոհով, և հարձակման առաջնային նպատակն է եղել գրավել Լեռնային Ղարաբաղի հարավային շրջանները, որոնք ավելի քիչ լեռնային են, և հետևաբար ավելի հեշտ է գրավել, քան շրջանի առավել ամրացված ներքին հատվածը:

Թուրքիան բացահայտ ռազմական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին : Ենթադրվում է, որ Ադրբեջանին աջակցելով Թուրքիան նպատակ ունի ինչպես կոնֆլիկտում ամրապնդել Ադրբեջանի դիրքերը, այնպես էլ տարածաշրջանում թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը:

- **Նախապատմությունը**

Հայ-ադրբեջանական հակամարտությունը շուրջ մեկդարյա պատմություն ունի: 1988 թվականին ակտիվացավ հայ-ադրբեջանական հակամարտությունը, որի գագաթնակետը Արցախյան պատերազմն էր: 1994 թվականին՝ հակամարտող կողմերի միջև ստորագրված հրադադարից հետո, տարբեր տարիներին տեղի են ունեցել տարբեր տեսակի և ձևի զինված ընդհարումներ: Առանձնանում է հատկապես ապրիլյան պատերազմը:

2020 թ. հուլիսին սկսվեցին բախումներ Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերի միջև Տավուշի շրջանում, որի ավարտից հետո Ադրբեջանը սկսեց պատրաստվել լայնածավալ պատերազմի:

Սեպտեմբերի 22-ից Ադրբեջանում առգրավել կամ հաշվառել են անձնական զույք հանդիսացող պիկապ մեքենաներ՝ պատճառաբանելով, որ այն բանակի կարիքների համար է: Ըստ Սիրիայի մարդու իրավունքներին հետևող կազմակերպության սեպտեմբերի 24-ի տարածած հաղորդագրության Թուրքիայի կառավարությունը Սիրիայի հյուսիսից Ադրբեջան է տեղափոխում Սուլթան Մուրադ և Ալ Համզա դիվիզիաների 300 վարձկանների:Պատերազմը սկսելուց մեկ օր առաջ ԱՄՆ-ն իր քաղաքացիներին կոչ արեց լարվածության սրացման և վերջին բախումների պատճառով հեռու մնալ հայ-ադրբեջանական սահմանին մոտ գտնվելուց:

Սեպտեմբերի 27

Ըստ Արցախի նախագահի մամուլի քարտուղարի՝ առավոտյան սկսված ռազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի զինված ուժերը հրետակոծում են նաև խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը : Ստեփանակարտում հայտարարվել է օդային տագնապ:

Ըստ ՀՀ ՊՆ խոսնակի՝ հայկական կողմը խոցել է ադրբեջանական երկու ուղղաթիռ և երեք ԱԹՍ, Ադրբեջանը ունեցել է նաև մարդկային և տեխնիկական կորուստներ, մասնավորապես 3 տանկի կորուստ: ԱՀ ՊՆ, ՊԲ հրամանատար Ջալալ Հարությունյանը հանդես է եկել մարտակոչով:

Ըստ Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի՝ Ադրբեջանի հարձակման հետևանքով Արցախի քաղաքացիական բնակչության շրջանում կան կորուստներ[39]: Մարտունու շրջանում երկու անձ է զոհվել՝ մեկ կին ու մեկ երեխա, կա երկու վիրավոր:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը երկրի տարածքում հայտարարել է ռազմական դրություն և համատարած զորահավաք:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել է երկրում ռազմական դրության և ընդհանուր զորահավաք հայտարարելու մասին:

Ըստ տեղեկատվական փորձագետ Սամվել Մարտիրոսյանի՝ Ադրբեջանում արգելափակվել են գրեթե բոլոր սոցիալական մեդիաները. Facebook, Youtube, Whatsapp, TikTok, աշխատում է միայն Twitter-ը:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը մամլո ասուլիսի ժամանակ հայտնել է, որ Արցախի դեմ լայնածավալ պատերազմում Ադրբեջանի հետ կռվում է նաև Թուրքիան, որը ներկայացված է մեծաքանակ ռազմական տեխնիկայով, օդուժով և վարձկան զինվորներով:

Սեպտեմբերի 28

Սեպտեմբերի 28-ին Ադրեջանի նախագահ Իլհամ Ալիևի հրամանագրով երկրում հայտարարվել է մասնակի զորահավաք[44]:

Արցախի պաշտպանության նախարարությունը հրապարակել է սեպտեմբերի 28-ին հակառակորդի դեմ ծավալված մարտերի ընթացքում զոհված 28 զինծառայողների անունները:

Երկու կողմերի զինված ուժերը պարբերաբար հրապարակում են հակառակորդի զինտեխնիկան ոչնչացնելու տեսանյութեր: Ադրբեջանը ներկայացնում է հիմնականում Արցախի պաշտպանական զինատեսակների, մասնավորապես «Օսա-ԱԿ»-ներին հարվածելու տեսանյութեր, իսկ հայկական կողմը հրապարակում է Ադրբեջանի հարձակվողական զինտեխնիկայի, մասնավորապես հարվածային անօդաչու սարքերի, տանկերի և այլ մարտական մեքենաներ ոչնչացնելու տեսանյութեր:

Երևանյան Հայաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը հայտնել է, որ Ադրբեջանը սկսել է լայնամասշտաբ հարձակողական նոր գործողություն Արաբսի հովտի հատվածում և Մատաղիս-Թալիշ հատվածներում: Հաղորդագրության համաձայն՝ Արցախի ՊԲ-ը հաջող դիմակայել է բոլոր հարձակումներին՝ հակառակորդին հասցնելով անձնակազմի և տեխնիկայի զգալի կորուստներ, մասնավորապես ոչնչացվել է 22 միավոր տանկ, 10 միավոր այլ զրահատեխնիկա, ավելի քան 370 զինվորական:

Սեպտեմբերի 29

Սեպտեմբերի 29-ի առավոտյան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Ադրբեջանը կրակ է վարել ՀՀ ԶՈՒ Վարդենիսի զորամասի, ինչպես նաև օդուժ են կիրառել դիրքերի ուղղությամբ: Ադրբեջանական հարվածային ԱԹՍ-ի հարվածից Վարդենիսում այրվել է քաղաքացիական ավտոբուս:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ ժամը 10:30-ին Թուրքիայի ռազմաօդային ուժերին պատկանող F-16 կործանիչները օդ են բարձրացել Ադրբեջանի «Գյանջա» օդանավակայանից և ապահովել են «Դալյար» օդանավակայանից ՀՀ Վարդենիսի տարածաշրջանի Վարդենիս, Մեծ Մասրիկ, Սոթք տարածաշրջաններում տեղակայված ՀՀ բնակավայրերի և ԶՈՒ ցամաքային ստորաբաժանումների ուղղությամբ Ադրբեջանի ՍՈՒ-25 և թուրքական արտադրության «Բայրաքթար» ԱԹՍ-ով ռմբահրթիռային հարվածները: F-16 կործանիչի կողմից ՀՀ օդային տարածքում խոցվել է ՀՀ ԶՈՒ ռազմաօդային ուժերի ՍՈՒ-25 զրոհիչը, օդաչուն զոհվել է: Թուրքիայի Հանրապետության F-16 բազմաֆունկցիոնալ կործանիչը գտնվել է 60 կմ խորության, 8200 մետր բարձրության վրա:

Սեպտեմբերի 30

Ըստ Հայաստանի զինված ուժերի՝ գիշերը մարտերը շարունակվել են ավելի պակաս ինտենսիվությամբ:

Ըստ Հայկական զինված ուժերի՝ նրանք զգետնել են 2 ադրբեջանական IAI Harop տեսակի ԱԹՍ:

Ըստ ՀՀ ՊՆ խոսնակ Շուշան Ստեփանյանի՝ ժամը 10:00-ից սկսած թուրքական F-16 համակարգերի, ադրբեջանական օդուժի ՍՈՒ-25 տիպի զրոհիչների, «Բայրաքթար» տիպի հետախուզահարվածային ԱԹՍ-ների միջոցով ռմբակոծվել են Հաղրութի և Մարտունու շրջանի բնակավայրերը: Մոտավորապես ժամը 11:10-ի մոտ Արծրուն Հովհաննիսյանը նշեց, որ Ադրբեջանական զինուժը օդային հարձակման է անցել հյուսիսային ուղղությամբ:

Ժամը 13:00-ին ՀՀ ՊՆ-ն հայտարարեց, որ ոչնչացվել են ադրբեջանական մեծ թվով կենդանի ուժեր, այդ թվում «SOU-1A» ռազմական տեխնիկա:

Ժամը 15:30-ի մոտ ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը հայտնեց, որ խոցվել են ադրբեջանական զինուժի դիրքեր՝ ներկայացնելով տեսանյութ:

Արցախի նախագահի մամուլի խոսնակ Վահրամ Ղողոսյանը հայտնել է, որ Ադրբեջանի ռազմական ինքնաթիռը ռմբակոծել է Մարտակերտ քաղաքը, որի հետևանքով երեք խաղաղ բնակիչ է զոհվել, կան նաև վիրավորներ:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ հայկական զինված ուժերը տեղեկատվություն է ստացել, որ Թուրքիայից Ադրբեջանը ստացել է Բայրաքթար տեսակի անօդաչու սարքեր, նաև Ադրբեջանում աշխատում են թուրքական F-16 ինքնաթիռները:

17:00-ի մոտ հրապարակվեցին սեպտեմբերի 29-ին խոցված Սու-25 ինքնաթիռի նկարները:

18:00-ի մոտ ըստ Հայկական Զինված ուժերի՝ իրենց կողմից խոցվել են «Սմերչ» և «Ուրազան» տիպի ռեակտիվ կայանքներ: BBC խմբագրականը հարցազրույց էր վերցրել Ադրբեջանի կողմից կռվող սիրիացի վարձկանից, որը նշել էր, որ իրենց խաբել են՝ բերելով ռազմաճակատ:

Երեկոյան Արցախի ՊԲ-ն հրապարակեց 23 զոհված զինվորականի անուն:

Ըստ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի՝ պատերազմի առաջին 4 օրվա ընթացքում հայկական զինված ուժերի կողմից խոցվել է Ադրբեջանական այնքան ռազմական տեխնիկա, որքան Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ:

Ըստ Արցախի ՊԲ-ի՝ ադրբեջանական զինուժի կորուստները եղել են 130 զոհ, 260 վիրավոր, 29 տարբեր տեսակի զրահատեխնիկա, 3 ՏՈՍՍ ծանր հրանետային կայանքներ և 11 անօդաչու թռչող սարքեր:

Հոկտեմբերի 1

Հոկտեմբերի 1-ին նախորդող գիշերը ըստ ՊԲ-ի եղել է կայուն լարված, իսկ առավոտյան մարտական գործողությունները վերսկսվել են: Ըստ Արցախի նախագահի մամուլի խոսնակի՝ պատերազմը սկսվելուց ի վեր հոկտեմբերի 1-ի գիշերը եղել է առաջին գիշերը, երբ բացառությամբ մի քանի դեպքերի՝ եղել է հարբերական անդորր: Ըստ մամուլի խոսնակի՝ ադրբեջանական զինված ուժերի զոհերի մեջ գերակշռում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ թալիշներն ու լեզգիները, մահացած զինվորականների համազգեստների գրպաններում գտնվել են ներարկիչներ:

Մարտունի քաղաքում Ադրբեջանական հրթիռից վիրավորում են ստացել ֆրանսիական Le Monde պարբերականի երկու լրագրողներ, որոնց վիրահատել են Ստեփանակերտի հիվանդանոցում, ապա տեղափոխել Երևան, իսկ հաջորդ օրը հատուկ չվերթով նրանք տեղափոխվել են Ֆրանսիա:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտարարել է, որ ավելի քան 300 սիրիացի իսլամիստ թուրքական Ղազիանթեփով ուղարկվել է Ադրբեջան՝ պատերազմին մասնակցելու նպատակով: Նա նաև հայտնել է, որ տեղեկությունը հաստատված փաստ է, այդ մարդիկ նույնականացվել են և նրանց հետևում են, նրանք

բոլորն էլ կապ ունեն «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության հետ:

Հայկական կողմը հաղորդել էր հակառակորդի 3 ռազմական ինքնաթիռ, 2 ուղղաթիռ և 13 անօդաչու թռչող սարք խոցելու մասին: Արցախի Պաշտպանության բանակի նախնական տվյալներով՝ խոցված օդանավերը Սու-25, ուղղաթիռները՝ Մի-24 տիպի էին:

Ըստ Հայաստանի Հանրապետության հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) տեղորոշման հոկտեմբերի 2-ի ժամը 00:15-ի տվյալների՝ Հայաստանի Զինված ուժերի կողմից խոցվել է 4 անօդաչու թռչող սարք՝ 1-ը՝ Կոտայքի, ևս 3-ը՝ Գեղարքունիքի մարզում: Բոլոր խոցված անօդաչուները, ըստ Շուշան Ստեփանյանի, եղել են հետախուզական: Հայաստանի օդային տարածքում ընդհանուր առմամբ հոկտեմբերի 1-ին խոցվել է հակառակորդի 7 անօդաչու սարք: Գեղարքունիքի մարզի տարածքում հայտնված 6 անօդաչու թռչող սարքերից մեկից հրթիռ է արձակվել Մեծ Մասրիկ բնակավայրի վրա, ինչի հետևանքով մեկ քաղաքացիական անձ է զոհվել, ևս երկուսը՝ վիրավորվել:Երևկոյան Ադրբեջանական զինուժի կողմից հրետակոծվել է Սոթք-Քարվաճառ ավտոճանապարհը:

Հոկտեմբերի 2

Հոկտեմբերի 2-ի առավոտյան ժամը 07:55-ի սահմաններում հայկական ուժերի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) ստորաբաժանումները Արցախի հյուսիսարևելյան ուղղությամբ խոցել են հակառակորդի մեկական ինքնաթիռ և անօդաչու թռչող սարք, իսկ հակառակորդի՝ առանձին հատվածներում հայկական զորքերի պաշտպանությունը ճեղքելու փորձերը ձախողվել են: Ժամը 12:15-ին Հայկական ՀՕՊ ուժերը Արցախի հարավարևելյան ուղղությամբ խոցել են ադրբեջանական զինուժի ևս մեկ ինքնաթիռ, իսկ հյուսիսային ուղղությամբ ժամը 12:07-ից 12:10-ն ընկած ժամանակահատվածում՝ 2 անօդաչու թռչող սարք (ԱԹՍ): Ճակատի տարբեր ուղղություններում ընթացել են մարտեր, ոչնչացվել են հակառակորդի կենդանի ուժ և զրահատեխնիկա, մասնավորապես՝ տանկեր:

Արցախի Պաշտպանության բանակի փոխհրամանատար Արթուր Սարգսյանը հոկտեմբերի 2-ի առավոտյան հայտնել է, որ ադրբեջանցի խոցված սպայի մոտ հայտնաբերված իսրայելական «Թադիրա» մակնիշի ռադիոկայանի վերծանման արդյունքում պարզվել է, որ նշված ուղղություններում խմբավորումները ղեկավարվում են հիմնականում արաբերենով:

Շարունակվել է հակառակորդի կողմից խաղաղ բնակավայրերի թիրախավորումը, հրթիռակոծվել են Ստեփանակերտ և Հադրութ քաղաքները, որի հետևանքով եղել են վիրավորներ քաղաքացիական բնակչության շրջանում, Ստեփանակերտում փրկարար ծառայության շենքը մասնակի ավերվել է, որի արդյունքում եղել են 7 վիրավորներ, փլուզվել են հարյուրավոր տներ, նաև դպրոցներ ու հիվանդանոցներ, արձանագրվել է նաև 1 մահվան դեպք: Խաղաղ բնակչությանը թիրախավորելու մասին ահազանգել է նաև Արցախում Կարմիր խաչի առաքելության ղեկավար Բերտրան Լամոնը: Հրետակոծության տակ է հայտնվել նաև Մարտակերտում ռուս և հայ լրագրողների տեղափոխող մի ավտոբուս: Տեղեկությունը տարածել է ռուսական РИА Новости գործակալության թղթակիցը, ում խոսքով ավտոբուսում գտնվողները չեն տուժել:

Ըստ ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանի՝ հակառակորդը հոկտեմբերի 2-ին ունեցել է 520 զոհ, ավելի քան 700 վիրավոր, կորցրել է մոտ 45 միավոր զրահատեխնիկա, 6 ինքնաթիռ, որոնց մեծ մասը օդում չեն խոցվել, 3 ուղղաթիռ և 6 ԱԹՍ: Նա նշել է նաև, որ Հադրութ և Ստեփանակերտ քաղաքներին հասցված հարվածներից տուժել են մեծ թվով բնակիչներ, շինություններ, քաղաքացիական պաշտպանության ինստիտուտներ, ենթակառուցվածքներ: Ընդհանուր առմամբ հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով եղել է համեմատաբար հանգիստ իրավիճակ:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով՝ Արցախյան ազատամարտի և ապրիլյան պատերազմի օրերից հայտնի հրամանատար Կարեն Զալավյանը պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով և արժանացել Արցախի հերոսի կոչման: Միջոցառումը տեղի է ունեցել բանակի մարտական կառավարման կենտրոնում՝ Պաշտպանության բանակի բարձրագույն հրամկազմի ներկայությամբ: Ըստ Արայիկ Հարությունյանի՝ «Եղնիկներ»-ի հերոսական մարտական գործողությունների արդյունքում Կարեն Զալավյանի հրամանատարությամբ ոչ միայն գրավել են անհրաժեշտ ստրատեգիական կետեր, այլ նաև հակառակորդին կարողացել են պատճառել բավականին մեծ կորուստներ:

Հոոկտեմբերի 3

Գիշերվա ընթացքում արցախա-ադրբեջանական հակամարտության գոտում մարտերը տարբեր ինտենսիվությամբ շարունակվել են: Առավել թեժ մարտեր են ընթացել ճակատային գծի հյուսիսային և հարավային ուղղություններում, որտեղ հակառակորդը, ռազմաճակատ նետելով նոր ուժեր, անցել է հարձակման: ՊԲ ստորաբաժանումները դիմադրություն են ցուցաբերել և մեծ կորուստներ պատճառել հակառակորդին: Հարավային ուղղությամբ ոչնչացվել է հակառակորդի 3 ինքնաթիռ:

ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը հայտնում է, որ ըստ հետախուզական տվյալների՝ ադրբեջանական զոհերի քանակն արդեն անցնում է 3000-ը, իսկ դիերի մի մեծ մասը գտնվում է չեզոք գոտում ու նրանց այնտեղից հանելու ուղղությամբ գործնականում ոչ մի քայլ չի ձեռնարկվում

Ըստ Արցախի Պաշտպանության նախարարության տվյալների՝ մարտերի ընթացքում զոհվել են 51 զինծառայողներ:

Ցերեկվա ընթացքում Արցախա-ադրբեջանական հակամարտության գոտում մարտական գործողությունները չեն դադարել: ՊԲ ստորաբաժանումները հաջողությամբ իրականացրել են իրենց առջև դրված մարտական խնդիրները և հակառակորդին պատճառել կենդանի ուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ: Մասնավորապես ժամը 15:50-ի սահմանում ՊԲ հակաօդային պաշտպանության միջոցները հարավային ուղղությամբ խոցել են հակառակորդի 1 ուղղաթիռ:Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ Ադրբեջանը հեռահար խոցման միջոցներով հարվածել է քաղաքացիական այնպիսի ենթակառուցվածքների, որոնք կարող են բնապահպանական աղետ առաջացնել:Ադրբեջանի կողմից խաղաղ բնակչության նկատմամբ կիրառվել են LAR-160 տեսակի համազարկային կայանքների կասետային արկեր:

Հոկտեմբերի 4

Առավոտյան Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը հայտնեց, որ Ադրբեջանը շարունակում է հրթիռակոծել մայրաքաղաք Ստեփանակերտը «Պոլոնեզ» և «Սմերչ»

համակարգերով, ինչին ի պատասխան՝ Արցախի բանակն այսուհետ կթիրախավորի Ադրբեջանի խոշոր քաղաքներում մշտական տեղակայված զինվորական օբյեկտները: Հայտարարությունից քիչ անց Արցախի նախագահի խորհրդական Վահրամ Պողոսյանը հայտնեց, որ ոչնչացվել է Գանձակի օդակայանը, որն օգտագործվում էր նաև Ադրբեջանի ռազմաօդային և հակաօդային պաշտպանության ուժերի կողմից:

Երեկոյան Արցախի նախագահի խոսնակը հայտնեց, որ Ադրբեջանը սկսել է հրթիռակոծել նաև Շուշին: Ստեփանակերտում և Շուշիում հրթիռակոծությունների հետևանքով կան քաղաքացիական զոհեր:

Հոկտեմբերի 5

Հայաստանի ՊՆ Շուշան Ստեփանյանը առավոտյան նշեց, որ նախորդ գիշերվա ընթացքում մարտերը տարբեր ինտենսիվությամբ շարունակվել են: Արցախի ՊԲ-ն հայտարարություն տարածեց, որ ադրբեջանական զինուժը պատրաստվում է հարձակման:

Առավոտյան Իրանի մեջլիսի պատգամավորներն այցելեցին Արցախի սահման:

«Ադրբեջանը շարունակում է հարվածներ հասցնել քաղաքացիական ենթակառուցվածքներին Ստեփանակերտում: Չեն շրջանցում նույնիսկ դպրոցներն ու մանկապարտեզները»,- նշել է տեղեկատվական կենտրոնը և գրառմանը կից հրապարակել լուսանկարներ: Ըստ Արծրուն Հովհաննիսյանի, Ստեփանակերտը հրթիռակոծվում է «Սմերչ», «Պոլոնեզ» և «Կասիրգա» համակարգերից:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանով Արցախի հերոսի կոչման են արժանացել 5 զինծառայող:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց վերջին տարում զորացրված ժամկետային զինծառայողներին ևս կամավորագրվել և մեկնել ռազմաճակատ՝ չնայած օրենքը թույլ չի տալիս վերջին մեկ տարում զորացրված ժամկետային զինծառայողներին զորակոչել:

Հայկական կողմի խաղաղ բնակչության մեջ զոհերի թիվը հասավ 19-ի, իսկ վիրավորներինը՝ 90: Արցախի ՊԲ-ն հայտնեց 21 զոհված զինծառայողի անուն. զոհերի թիվը հասավ 223-ի:

Ըստ հայկական զինված ուժերի՝ միայն հարավային ուղղությամբ ադրբեջանական զինուժը հոկտեմբերի 5-ի դրությամբ տվել է մոտ 200 զոհ:

Amnesty International իրավապաշտպան կազմակերպությունը հայտարարել է, որ իր փորձագետները Ստեփանակերտում հաստատել են՝ Արցախի մայրաքաղաքը ռմբակոծվել է իսրայելական արտադրության M095 DPICM տեսակի կասետային ռումբերով, որոնք միջազգային իրավունքով արգելված են: Թեև Ադրբեջանը հաղորդել է իր մեծությամբ երկրորդ քաղաքի՝ Գյանջայի և այլ բնակավայրերի հրետակոծության մասին, և չնայած իրավապաշտպան կազմակերպության փորձագետները հաստատել են, որ 300 միլիմետր տրամաչափի «Սմերչ» հրթիռային համակարգերն իսկապես օգտագործվել են հայկական ուժերի կողմից, Բաքվի ներկայացրած ֆոտո և վիդեո ապացույցները դեռևս թույլ չեն տալիս եզրակացություն անել հատուկ թիրախավորման, ինչպես նաև այն մասին, թե հրթիռային մարտագլխիկներում եղել է կասետային զինամթերք:

Հոկտեմբերի 6

Հոկտեմբերի 5-ի, լույս 6-ի գիշերը առաջնագծում իրադրությունը եղել է հարաբերական կայուն-լարված:

Արցախի ՊԲ տեղեկություններով, կեսօրին մոտ Ադրբեջանի զինված ուժերը հարձակում են սկսել Արցախի և Ադրբեջանի միջև շփման գծի հարավային ուղղությամբ՝ օգտագործելով ռեգերվային ուժեր և մեծաքանակ ռազմական տեխնիկա, ներառյալ՝ տանկեր և իրետանի: Ադրբեջանի կողմից նորից հրթիռակոծվել են Ստեփանակերտն ու Շուշին:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ ժամը 14:00-ի սահմաններում Արցախի Պաշտպանության բանակի հատուկ նշանակության ստորաբաժանման և «Կամավորական շարժում» ՀԿ ջոկատի ակտիվ մասնակցությամբ, հյուսիսային ուղղությամբ կազմակերպվել է հակագրոհ և հետ է վերադարձվել Վարանգաթաղի բարձունքը: Թուրքական կողմը տվյալ բարձունքում թողել է 6 դիակ:

Հայաստանի նախագահի աշխատակազմը ընդհանուր առմամբ 81,3 միլիոն դրամ է հատկացրել Արցախի վերականգնման և անհրաժեշտ այլ կարիքների համար:

Հոկտեմբերի 7

Ամբողջ գիշեր հրթիռակոծվել է Ստեփանակերտը:Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ գիշերվա ընթացքում ադրբեջանական կողմը փորձել է առաջանալ և ամրանալ հարավարևելյան ուղղությամբ, սակայն հայկական զինված ուժերի հրթիռահրետանային դիպուկ կրակով ադրբեջանական ստորաբաժանումները չեզոքացվել են: Առավոտյան 06:30-ին՝ հերթական հրթիռահրետանային հարվածից հետո, մարտադաշտում թողել են ևս 60 զոհ, ինչպես նաև 22 միավոր խոցված և մի քանի տասնյակ սարքին տեխնիկա, թուրքական գերհագեցած երեք բրիգադների մնացորդները խուճապահար դիմել են փախուստի: Հայկական ստորաբաժանումների դիպուկ կրակով առավոտյան հարավարևելյան ուղղությամբ խոցվել է հակառակորդի վառելաքսուքային պահպանման խոշոր բազա[102]:

Հայկական կողմը հրապարակեց 40 զոհի անուն:

Հայկական զինուժը հրապարակեց Մեխակավանից ադրբեջանական ուժերի հետշպրտման տեսանյութ:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ հյուսիսային ուղղությամբ հայկական կողմն ունի զգալի առաջխաղացում: Նա նշեց նաև, որ մարտերը ծանր են:

16:00-ի մոտ Արցախի ՊԲ-ն հայտարարեց ևս 40 զոհի անուն:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ երեկոյան հրթիռակոծվել են Շուշին և այլ քաղաքներ[108]: Վնասվել է նաև Շուշիի մշակույթի տունը:

Ըստ պաշտոնական տվյալների՝ սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում Արցախում վիրավորվել է 93 քաղաքացիական բնակիչ, կա 20 զոհ, չհաշված Հայաստանի տարածքում 2 զոհը (Մեծ Մասրիկում, Վարդենիսում): Հիմնովին կամ մասնակի ավերվել է 4600 անշարժ գույք, 430 մասնավոր գույք է շարքից դուրս եկել, 750 տարբեր ենթակառուցվածքներ:

Հոկտեմբերի 8

Ողջ գիշեր Ստեփանակերտը եղել է հրթիռակոծության տակ. հոկտեմբերի 7-ի երեկոյան՝ 20:30-ից սկսած մինչև լուսաբաց որոշակի ընդմիջումներով հնչել է օդային տագնապի ազդանշան, ինչը նշանակում է, որ երկնքում ոչ միայն անօդաչու թռչող սարք է եղել, այլև ՀՕՊ-ն է աշխատել այն չեզոքացնելու ուղղությամբ:

Մարտերը վերսկսվել են և՛ հարավային, և՛ հյուսիսային ուղղություններում:

Արցախի տեղեկատվական շտաբը հայտնել է, որ հոկտեմբերի 8-ին երկու անգամ հրթիռակոծվել է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց մայր տաճարը: Երկրորդ հարվածի ժամանակ տեղում լրագրողներ են եղել, որոնք նկարահանում էին առաջին հարվածի հետևանքները: Ըստ Արցախի օմբուդսմենի՝ երեք լրագրող վիրավորվել է, նրանց թվում և ռուս լրագրողներ Յուրի Պետրովիչ Կատյոնկը և Լևոն Արզանովը, ինչպես նաև նրանց ուղեկցող խմբի անդամ Հրանտ Բալաթյանը: Արցախի օմբուդսմեն Արտակ Բեգլարյանի տվյալներով՝ ադրբեջանական զինված ուժերը հրթիռակոծել են նաև Շուշիի մզկիթի շրջակայքը: 12 օր շարունակվող ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմի զոհված զինծառայողների թիվը հասել է 350-ի:

Ադրբեջանը շարունակում է չհրապարակել ռազմական կորուստները, հայտնում է միայն քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի և տուժածների մասին:

Համաձայն Պաշտպանության նախարարության հաղորդագրության՝ ժամը 14:00-ի սահմաններում Ադրբեջանը հարավային սահմանի երկու ուղղություններով գրոհ է ձեռնարկել, որը Պաշտպանության բանակի ստորաբաժանումները կասեցրել են, Ադրբեջանական զինուժին պատճառվել են կենդանի ուժի զգալի կորուստներ, խոցվել է 9 միավոր զրահատեխնիկա: Հարավային ուղղությամբ Արդբեջանը հարձակումը սկսել է առավոտից, սակայն զոհեր տալով և տեխնիկայի կորուստով Ջեբրայիլի մատույցներում՝ փախուստի է դիմել: Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ ոչնչացվել է Ադրբեջանի չորս միավոր Դ-30 հաուբից՝ անձնակազմով և զինամթերքով, խոցվել է երկու ԱԹՍ:

Պաշտոնական Բաքուն հայտնել է, որ հայկական կողմից «Գրադ» և «Սմերչ» է կիրառվում: Ըստ Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեդ Հաջիևի՝ «Գրադ» կայանքներից մեկը ադրբեջանցիները կարողացել են հրթիռով խոցել: Ադրբեջանի նախագահ Ալիևը հայտարարել է, թե հայկական ուժերը Ադրբեջանին հարվածում են բալիստիկ հրթիռներով, ինչի համար «պետք է պատասխանատվություն կրեն»: Հայաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը հայտնում է, որ մարտական գործողությունների ընթացքում Ադրբեջանը տարածում է ապատեղեկատվություն:

Հոկտեմբերի 9

Առավոտյան ժամը 10:00-ից սկսած կրկին սկսվել է ակտիվ հրթիռակոծությունը Ստեփանակերտի ուղղությամբ: Պարբերաբար հնչել է ՀՕՊ ազդանշան, ինչը ենթադրում է, որ տարածքում անօդաչու թռչող սարք է եղել: Երկրորդ հրթիռակոծությունը տեղի է ունեցել ժամը 15:00-ին: Հարկ է նշել, որ քաղաքում որևէ ռազմական օբյեկտ չկա:

Մոսկվայում հոկտեմբերի 9-ին մեկնարկել են Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունները: Մինչ այդ՝ կեսգիշերին մոտ, Կրեմլի պաշտոնական կայքում հրապարակվել էր Ռուսաստանի Դաշնության

նախագահի կոչը՝ մարդասիրական նպատակներով Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադար հայտարարել՝ գերիների և զոհերի աճյունների փոխանակման համար: Պաշտոնական Մոսկվան չի օգտագործել բանակցություններ տերմինը՝ դրանք կոչելով խորհրդակցություններ:

Ամերիկայի տարբեր քաղաքներում բնակվող հայերը մի քանի օր բողոքի ակցիաներ են անկացրել ընդդեմ Ադրբեջանի և Թուրքիայի: Ցույց էր տեղի ունեցել նաև Լոս Անջելեսում, տեղի հայերը մի քանի ժամով փակ էին պահել Հոլիվուդի բանուկ փողոցներից մեկը, հասել CNN հեռուստաընկերության առջև ու օբյեկտիվ լուսաբանում պահանջել: Վաշինգտոնում հայերն ամերիկյան կառավարությանն ուղղված պահանջներից բացի, դիմել էին նաև միջազգային մամուլին՝ հետևողականորեն և օբյեկտիվ լուսաբանել Ադրբեջանի կողմից Արցախին հայտարարված պատերազմը: Կազմակերպիչներից Քրիստինե Հալաջյանը հայտարարել է, որ հարկ եղած դեպքում կանցնեն ամերիկյան բոլոր խոշոր լրատվամիջոցների շենքերով մինչև իրենց ձայնը հասնի Սպիտակ տուն: Սփոյուքահայերի բողոքի ակցիաները շարունակվել են աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում, Շվեդիայում, Սլովակիայում և այլն :Հոկտեմբերի 9-ին հայկական կողմի զոհերի թիվը հասել է 376-ի:

ԱՀ Պաշտպանության բանակը հայտնում է. «Գիշերվա ընթացքում արցախա-ադրբեջանական հակամարտության գոտում իրադրությունը եղել է հարաբերականորեն կայուն-լարված: Օպերատիվ-մարտավարական իրադրությունը մնացել է անփոփոխ: Հազմաճակատի առանձին հատվածներում շարունակվել են փոխհրաձգություններ, հրետանային մենամարտեր, հակառակորդը հրթիռա-հրետանային հարվածներ է հասցրել նաև խաղաղ բնակավայրերի ուղղությամբ[115]: Ըստ Շուշան Ստեփանյանի՝ դեռևս առավոտյան 9:30-11:00-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանը կիրառել է մեծաքանակ ԱԹՍ-ներ, մասնավորապես, Երիցվանք գյուղական համայնքի, ՀՀ-ի Սյունիքի մարզի, Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի ուղղությամբ, այնուհետև օրվա ընթացքում խախտել է հրադադարի ռեժիմը նաև այլ ուղղություններով:

Հոկտեմբերի 9-ին սկսված և ավելի քան 10 ժամ տևած խորհրդակցությունների արդյունքում հրադադարի մասին պայմանավորվածություն ձեռք բերվեց Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի միջնորդությամբ Մոսկվայում՝ Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներ Զոհրաբ Մնացականյանի և Ջեյհուն Բայրամովի միջև: Դռնփակ հանդիպման ավարտին տարածվեց արտգործնախարարների համատեղ հայտարարությունը, որով կողմերը համաձայնեցին 72 ժամ հրադադար հաստատել հոկտեմբերի 10-ից՝ ժամը 12:00 -ից մարդասիրական նկատառումներով՝ ռազմագերիների փոխանակման և զոհվածների աճյունների դուրսբերման համար՝ Կարմիր խաչի միջնորդությամբ և վերջինիս չափանիշներով[116]: Պայմանավորվածության համաձայն՝ կրակի դադարեցման հստակ պարամետրերը կհամաձայնեցվեն հավելյալ: Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ, կարգավորման հիմնարար սկզբունքների հիման վրա ձեռնամուխ են լինելու առարկայական բանակցությունների՝ խաղաղ կարգավորմանը հասնելու նպատակով: Կողմերը վերահաստատում են բանակցային գործընթացի ձևաչափի անփոփոխությունը: Սակայն հրադադարի մասին

պայմանավորվածությունը խախտվեց Ադրբեջանի կողմից 12:05-ին՝ գրոհելով Կարախամբեյլի կոչվող տեղամասի ուղղությամբ: Ադրբեջանական կողմը դիվերսիոն-հետախուզական ներթափանցման փորձ է ձեռնարկել Հադրութի ուղղությամբ, որի ժամանակ դիվերսիոն խումբը տանը սպանել է 2 բնակչի՝ մոր ու հաշմանդամություն ունեցող նրա որդուն: Հրթիռակոծվել է Ստեփանակերտը:

Շուշան Ստեփանյանի հաղորդմամբ՝ օրվա ընթացքում Հայաստանի պաշտպանության նախարար, ՀՀ զերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Դավիթ Տոնոյանն ընդունել է Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակության ղեկավար Քլեր Մեյթրոյի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել է մարդասիրական նպատակներով հայտարարված կրակի դադարեցման և ռազմագերիների ու զոհվածների մարմինների փոխանակման համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ ու վերջինիս չափանիշների համաձայն համապատասխան գործողությունների իրականացման ընթացակարգը, որը համակարգվելու է Արցախի իշխանությունների հետ:

Հոկտեմբերի 11

Ըստ Ադրբեջանի իշխանությունների պնդումների՝ հոկտեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը Գանձակ քաղաքի կենտրոնական մասում տեղակայված բազմաբնակարան շենքին հայկական զինված ուժերի հասցրած հրթիռային հարվածի հետևանքով զոհվել է 9 մարդ, 28-ը՝ վիրավորվել: Վնասվել են մեծ թվով քաղաքացիական օբյեկտներ: Արցախի Պաշտպանության բանակը և ՀՀ պաշտպանության նախարարությունը հերքել են Գանձակին հարվածելու վերաբերյալ Ադրբեջանի հայտարարությունը :

Հոկտեմբերի 12

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ գիշերվա ընթացքում շփման գոտում իրադրությունը եղել է հարաբերական կայուն-լարված: Ըստ ՊԲ-ի՝ գիշերվա ընթացքում որոշակի ակտիվություններ են նկատվել հյուսիսային, հյուսիս արևելյան և հարավային ուղղություններով: Առավոտյան ադրբեջանական զինուժը սկսել է հրետակոծել հարավային շփման գծի ուղղությամբ:

Ըստ Արցախի նախագահի մամուլի խոսնակ Վահրամ Պողոսյանի՝ ժամը 11:30-ի դրությամբ ադրբեջանական ուժերը որոշ տեղեր անցել են հարձակման, բայց նրանց չի հաջողվել առաջ գալ:

Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ առավոտյան խոցվել է «ԱՆ-2» տիպի անօդաչու ռմբակոծիչ ինքնաթիռ և ևս մեկ Սու-25 գրոհիչ Քարվաճառի ուղղությամբ: Դա հերքվեց Ադրբեջանի զինված ուժերի կողմից, բայց հաստատվեց ռազմաճակատից:

Ըստ Արծրուն Հովհաննսիյանի երեկոյան ասուլիսի՝ այդ պահի դրությամբ Հադրութ քաղաքը գտնվել է հայկական զինված ուժերի վերահսկողության տակ: Իսկ Թալիշի ուղղությամբ հակառակորդը գտնվում է գյուղի հյուսիսային մատույցներում:

Հոկտեմբերի 13

Գիշերվա ընթացքում ռմբակոծվել
են Մարտակերտ, Ասկերան և Մարտունի քաղաքները: Առավոտյան թուրքական

զինուժի կողմից լայնամաշտաբ հարձակում է սկսվել հարավային, հյուսիսային, հյուսիս-արևելյան և արևելյան ուղղությամբ:

Ադրբեջանի զինուժը պնդում էր, որ հայկական կողմը ռմբակոծել է Թարթառի և Աղջաբեդիի շրջանների բնակավայրերը, որը Արցախի ՊԲ-ն հերքել է:

Օրվա ընթացքում Իրանի տարածքում՝ Արդաբիլի մարզում անօդաչու թռչող սարք է ընկել, որը վնասել է ցանքատարածությունները: Ըստ տարածված տեսանյութի՝ սարքը իսրայելական արտադրության էր:

Մարտերի ընթացքում զոհվում է գնդապետ Վահագն Ասատրյանը. 2 օր անց վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի նախագահին միջնորդություն է ներկայացնում նրան հետմահու Ազգային հերոսի կոչում շնորհելու մասին:

Հոկտեմբերի 14

03:23-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ օդային հարվածներով ոչնչացրել է Հայաստանի տարածքում գտնվող որոշ բալիստիկ հրթիռներ: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հաստատել է, որ Հայաստանի տարածքում թիրախավորվել է տեխնիկա՝ ընդամենը ենթադրությունների հիման վրա, թե իբր այդ տեխնիկան պատրաստ է եղել հարվածել Ադրբեջանի խաղաղ բնակավայրերին: Ռուսաստանի Դաշնության նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովը հայտնել է, որ ռուս մասնագետները ստուգում են Ադրբեջանի կողմից ՀՀ տարածքին հարվածելու մասին տեղեկատվությունը:

ՀՀ ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը հայտնել է, որ վաղ առավոտյան Ադրբեջանի զինված ուժերը վերսկսել են լայնածավալ հարձակողական գործողությունները հատկապես հյուսիսային և հարավային ուղղություններով, բայց ոչ դեպի Արաքսի հովիտ:

Հոկտեմբերի 16

Վաղ առավոտյան, ադրբեջանական զինված ուժերը և՛ հյուսիսում, և՛ հարավում երկար հրետակոծությունից, հրետանային պատրաստությունից հետո, որի ընթացքում կիրառվել են նաև օդային հարձակման այլ միջոցներ՝ ԱԹՍ-ներ, հրթիռներ, օդուժ, անցել է լայնածավալ հարձակման: Հոկտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը, հատկապես լուսադեմին, թշնամին հրետանու կիրառմամբ ինտենսիվ կրակ է բացել Մարտունի քաղաքի և Կարմիր Շուկա բնակավայրի ուղղությամբ, իսկ առավոտյան՝ Բերդաշեն համայնքի ուղղությամբ:

Հրետակոծվել են Ստեփանակերտը, Հադրութի շրջանի Տող, Քաշաթաղի շրջանի Տիգրանավան, Այգեհովիտ և Աղավնո բնակավայրերը: Վիրավորվել են Շոշ համայնքի երեք խաղաղ բնակիչ:

Հարավային ուղղությամբ ամբողջ օրը ընթացել են ծանր մարտերը: Որոշ ուղղություններով հայկական զորքերը կատարել են վերախմբավորումներ:

Հոկտեմբերի 17

Հայաստանի օդային տարածքում ՀՀ ՋՈՒ ՀՕՊ ստորաբաժանումները խոցել են հակառակորդի երկու ԱԹՍ: ՀՀ հակաօդային պաշտպանական համակարգերի կողմից արձանագրվել է ադրբեջանական անօդաչու թռչող սարքերի թռիչքներ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Խնածախ, Արծվանիկ, Դավիթ

Բեկ բնակավայրերի ուղղությամբ, որի ժամանակ նաև հարվածներ են հասցվել տեղում ՀՀ ԶՈՒ ենթակառուցվածքների ուղղությամբ՝ վնասելով նաև քաղաքացիական ենթակառուցվածքներ:

ՀՕՊ ստորաբաժանումները ժամը 16:30-ից 17:45-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ օդային տարածքում խոցել են հակառակորդի երեք, Արցախում՝ մեկ ԱԹՍ:

Թե՛ հարավային, թե՛ հյուսիսային հատվածներում ընթացել են մարտեր, որոնք, ըստ Արծրուն Հովհաննիսյանի, ավելի թեժ և ինտենսիվ էին, քան նախորդ երկու օրերին:

Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը որոշում են հոկտեմբերի 18-ին, տեղական ժամանակով ժամը՝ 00:00-ից հաստատել մարդասիրական զինադադար:

Հոկտեմբերի 18

Ժամը 07:20-ին թշնամին խախտում է մարդասիրական զինադադարը հրետանային ակտիվ կրակով, որից հետո հակառակորդը բարենպաստ դիրքեր գրավելու նպատակով հարձակում է ձեռնարկում հարավային ուղղությամբ : Երկուստեք ունենում են զոհեր և վիրավորներ: Հարավային ուղղությամբ ՊԲ ստորաբաժանումները խոցել են հակառակորդի գրոհող 4 տանկ:Արցախա-ադրբեջանական հակամարտության գոտու հարավային թևում հակառակորդը կիրառել է մեծ թվով ԱԹՍ-ներ և հրետանային միջոցներ: Խոցվել է 2 ԱԹՍ:

Հոկտեմբերի 19

Առավոտից թշնամին հրթիռակոծել է Մարտունի քաղաքը, Քաշաթաղի շրջանի Ուռեկան, Իշխանաձոր, Այգեհովիտ և Վուրգավան համայնքները:

Հայկական կողմը հերքել է Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղը թիրախավորելու մասին ադրբեջանական լուրերը:

Հոկտեմբերի 20

Հյուսիսային թևում հակառակորդը կիրառում է ավիացիա և հրետանի: Հարավային ուղղությամբ ինտենսիվ ծանր մարտերը շարունակվում են: Խոցվել է թշնամու ևս 5 ԱԹՍ, 10 զրահատեխնիկա, 1 ինքնաթիռ, թշնամին ունի 50 զոհ: Մարտակերտի ուղղությամբ կիրառել էր ավիացիա, ռմբակոծել քաղաքացիական ենթակառուցվածքները:

Հայկական կողմը հերքում է Գերանքոյի և Թերթերի շրջաններին ՀՀ ԶՈՒ կողմից հրետանային հարվածներ հասցնելու մասին ադրբեջանական լուրերը:

Հոկտեմբերի 21

Արցախի ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումները հարավային ուղղությամբ ժամը 08:30-ի սահմաններում խոցել են հակառակորդի ինքնաթիռ: Մարտակերտը՝ հարակից գյուղերով, նորից հայտնվել է թշնամու նշանակետում:

Խոցվել է թշնամու ևս 2 ԱԹՍ, 4 զրահատեխնիկա, կա 150 զոհ:

Կենտրոնական ուղղությամբ ևս ծանր մարտեր են ընթացել, մի քանի դիվերսիոն խմբեր փորձել են ներթափանցել հայկական դիրքեր: Այնուհետև մարտերի ուղղությունը թեքվել է դեպի հարավ՝ Արաքսի հունին մոտ:

Հոկտեմբերի 22

Հակառակորդը Արցախի ողջ սահմանի երկայնքով շարունակել է հարձակողական գործողությունները բոլոր ուղղություններով: Ակտիվ են եղել ինչպես հյուսիսային, այնպես էլ կենտրոնական և հարավային ուղղությունները:

Կենտրոնական ուղղությամբ մարտական գործողություններ են ընթացել կոնկրետ բնակավայրերի ուղղությամբ: Այդ օջախային մարտերը իրենցից ներկայացնում են տարբեր դիվերսիոն խմբերի ներթափանցումներ փոքր բնակավայրեր և ճանապարհային, հանգուցային կետեր:

Հարավում՝ տարբեր կետերում, տարբեր օջախային հատվածներում, հակառակորդի տարբեր զորախմբերը փորձել են առաջխաղացում ապահովել ինչպես դեպի արևմուտք, այնպես էլ դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք: Թեժ մարտեր են ընթացել հատկապես Մարտունու շրջանի Շեխեր և Ջիվանի գյուղերի մատույցներում:

Ադրբեջանական կողմի հայտարարությունը, թե Հայաստանը Գաբալայի և Քյուրդամիրի ուղղությամբ բալիստիկ հրթիռներ է արձակել, հերքվել է հայկական կողմից:

Հոկտեմբերի 23

Թշնամական ուժերը հրետակոծել են Ասկերանը, իսկ կեսգիշերին՝ կրկին անգամ թիրախավորել Մարտունին, Ստեփանակերտը և Մարտակերտը: Վերջինիս վրա կիրառվել է ռազմական ավիացիա: Լուսադեմին Մարտունու շրջանի Կարմիր Շուկա և Թաղավարդ գյուղերն են հայտնվել Ադրբեջանի թիրախում: Կիրառվել է ամերչ տեսակի հրթիռներ:

Ժամը 14:20-ի սահմաններում թշնամին գրադ կայանքից հրթիռակոծել է Քաշաթաղի շրջանի Քարեգահ համայնքի տարածքը, այնուհետև Քարեգահ-Բերձոր ճանապարհահատվածը: Երեք արկ ընկել է Բերձորի տարածաշրջան:

Օրվա ընթացքում հատկապես թեժ են եղել կենտրոնականից հարավ ընկնող Շեխեր, Ջիվանիկ և հարակից գյուղերում դիվերսիոն ներթափանցման գործողություններ իրականացրած ադրբեջանական հրոսակախմբերի և դիվերսիոն խմբերի չեզոքացման աշխատանքները: Հարավային ուղղությամբ գրեթե ողջ օրը ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները փորձել են գրոհել Որոտանի ուղղությամբ, հարձակման մի քանի փորձեր տապալվել են, որից հետո, զգալի կորուստներ կրելով, հետ են շպրտվել:

Հրետակոծվել է նաև Ասկերանի շրջանի Ավետարանոց համայնքը: Քաղաքացիական բնակչության շրջանում եղել է մեկ վիրավոր: Եղել են նաև նյութական մեծ վնասներ:

Հարավային ուղղությամբ հայկական ուժերի հաջող գործողության արդյունքում ոչնչացվել է հակառակորդի հատուկ նշանակության խոշոր ստորաբաժանում, 9 միավոր տեխնիկա, իսկ մի քանիսը՝ առգրավվել:

Գերեվարվել է ադրբեջանական զինուժի զինծառայող, ով վիրահատվել է հայ ռազմաբժիշկների կողմից:

Հոկտեմբերի 24

Ադրբեջանական զինված ուժերը պարբերաբար հարձակման փորձեր են կատարում նաև հայկական ՋՈՒ-ների համազգեստներով: Հիմնական նպատակներն են՝ • Շփոթեցնել հայ զինծառայողներին և դրա հաշվին հաջողությունների հասնել, • Արհեստականորեն նվազեցնել ու թաքցնել իրենց զոհերը, իսկ մյուս կողմից՝ դիակների փոխանակման ժամանակ փորձել դրանք ներկայացնել որպես հայկական զոհեր:

Կեսօրվա ընթացքում սկսվել է հուժկու հրետանային փոխհրաձգություն հյուսիսային հատվածում: Կենտրոնական ուղղությամբ Մարտունիից դեպի հարավ և Հադրութից մինչև հյուսիսային կողմ՝ անտառների և բնակավայրերի հարակից տարածքներում, չեզոքացվել է դիվերսիոն հետախուզական խմբերից մեկը:

Երեկոյան թշնամական ուժերը հերթական անգամ հրետակոծել են խաղաղ բնակավայրերը, մասնավորապես՝ Մարտունու շրջանի Կարմիր Շուկա, Թաղավարդ, Գիշի, Սպիտակաշեն համայնքներն ու Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղը:

Հոկտեմբերի 25

Հոկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերվա ընթացքում Ադրբեջանը շարունակել է հրետակոծել հայկական բնակավայրերը:

Հրետանի է կիրառվել Մարտունու շրջանի Կարմիր Շուկա, Թաղավարդ, Գիշի, Սպիտակաշեն համայնքների ու Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի ուղղությամբ, հրետակոծվել են նաև համայնքների հարակից տարածքները՝ անտառներով ու գյուղատնտեսական նշանակության դաշտավայրերով:

Հետկեսօրին, ադրբեջանական ուժերի կողմից հրետակոծության են ենթարկվել Ասկերանի շրջանի Ավետարանոց, Սոնախ և Մոշխմհատ գյուղերը:

Հադրութից հյուսիս, Մարտունիից հարավ մի քանի գյուղերում, այդ թվում՝ Ավետարանոց գյուղի հատվածի հարակից անտառներում երևացել են դիվերսիոն խմբեր: Հարավային ուղղությամբ ողջ օրվա ընթացքում դեպի հյուսիս և դեպի արևմուտք՝ Սանասարի ուղղությամբ, հակառակորդը ձեռնարկել է տասնյակ անգամյա գրոհներ ու հարձակումներ տարբեր ուղղություններով, ինտենսիվ մարտական գործողությունները ողջ օրվա ընթացքում շարունակվել են:

Մարտերի ընթացքում հակառակորդին հաջողվել է գրավել Կուբաթլուն և առաջանալ որոշ ուղղություններով:

Հոկտեմբերի 26

Հայաստանի արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանի և Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում, որը տեղի ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանի հետ, որոշվել էր կնքել հումանիտար հրադադար, որն ուժի մեջ էր մտնելու հոկտեմբերի 26-ից, ժամը 08:00-ից: Սակայն ադրբեջանական կողմը ժամը 08:45-ի սահմաններում հրետանային կրակ է վարել Արցախի հյուսիսարևելյան մարտական դիրքերի ուղղությամբ, իսկ ժամը 09:10-ի սահմաններում հակառակորդը թիրախավորել է հարավարևելյան ուղղությամբ դիրքերը՝ արձակելով հինգ հրետանային արկ: Մարտունի քաղաքի վրա կիրառել է ռազմական ավիացիա: Ժամը

13:50-ի սահմաններում հակառակորդը «Սմերչ» տիպի համազարկային կրակի ռեակտիվ համակարգից 1 հրթիռ է արձակել Մարտունու շրջանի Զարդարաշեն գյուղի ուղղությամբ: Ադրբեջանական հրթիռակոծության հետևանքով Ավետարանոց գյուղում զոհվել է 1 և վիրավորվել 2 քաղաքացիական անձ: Ժամը 17:00-ից Արցախի սահմանի երկայնքով կրակի խտությունը կտրուկ մեծացել է: Հակառակորդը ՊԲ դիրքերի ուղղությամբ կիրառում է փողային և ռեակտիվ հրետանի, նաև՝ տանկեր:

Հադրութից հյուսիս գտնվող գյուղերի անտառների հատվածում շարունակվել են դիվերսիոն խմբերի հարձակումները և հայկական կողմից դրանց մի մասի ոչնչացումը:

Հոկտեմբերի 27

Առավոտյան ժամը 10:00-10:15 սահմաններում, հերթական անգամ խախտելով հրադադարի ռեժիմը, ադրբեջանական կողմը անօդաչուներով (որոնցից մեկը ընկել է ՀՀ տարածքում) և հրթիռահրետանային միջոցներով հրետակոծել է ՀՀ հարավային սահմանի Իրանի հետ հատման կետի հայկական սահմանապահ ուղեկալի դիրքերը: ՀՀ հարավային ուղղությամբ ադրբեջանական ոտնձգությունները կանխելու նպատակով ՀՀ սահմանապահ ուժերը դիմել են կանխարգելիչ գործողությունների, ինչի արդյունքում ծանր մարտեր են ընթացել հայավային շրջանում: Ադրբեջանի կողմից սահմանի տվյալ հատվածում օգտագործվել են ԱԹՍ-ներ:

Որոտան գետի երկայնքով ձևավորվել էր ռազմաճակատ:

Ադրբեջանական կողմը կասետային հրթիռակոծման է ենթարկել Արցախի Մարտունու շրջանի Նեգի բնակավայրը, որտեղ ապաստան էին գտել Արցախի այլ հատվածներից տեղահանված խաղաղ բնակիչներ: Հարձակման արդյունքում կան ավերածություններ և վիրավորներ խաղաղ բնակչության շրջանում:

Հայկական կողմը հերքել է Բարդա շրջանի ուղղությամբ հրթիռակոծման վերաբերյալ Ադրբեջանի տարածած լուրը:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ հիմնականում դաշտավայրերում որոշակի հաջողություն ունենալուց հետո Ադրբեջանի զինված ուժերը, որոնց միացած են միջազգային ահաբեկչական կազմակերպությունների հրոսակախմբերը և այլք, փորձել են զարգացում ապահովել նաև անտառալեռնային տեղանքում: Այստեղ ընթացել է մարտավարական առումով ավելի դժվար ու բարդ պայքար: Ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացվել են հարձակումներ նաև Բերձորի ուղղությամբ, որոնք հաջողության չեն հասել: Երեկոյան Մարտունին և Ասկերանի վերին ենթաշրջանն են հայտնվել թշնամական ուժերի թիրախում:

Հոկտեմբերի 28

Առավոտյան ռազմագործողություններին զուգահեռ, խաղաղ բնակավայրերի ուղղությամբ Ադրբեջանը նորից կրակ է վարել: Լարված էր իրավիճակը Ավետարանոցի ձորակում: «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգով ամբողջ օրը հրետակոծվել են Շուշին և Ստեփանակերտը: Հարվածներ են հասցվել քաղաքների բնակելի թաղամասերին և քաղաքացիական ենթակառուցվածքներին, այդ թվում՝ Ստեփանակերտի ծննդատանը: Խաղաղ բնակչության շրջանում եղել են զոհեր և վիրավորներ, այդ թվում նաև՝ 3 փրկարարներ:

Ըստ ՊԲ հայտարարության՝ ռադիոհետախուզական տվյալների համաձայն թուրք-ադրբեջանական վարձկանների, ահաբեկիչների մարտավարությունն ու հեռախոսազրույցները վերլուծելով և հետախուզական փաստերը համադրելով եզրակացրել են, որ հայկական ստորաբաժանումների կողմից առաջնագծի որոշ ուղղություններում մարտավարական նպատակներով հետ քաշվելու արդյունքում, տվյալ հատվածներում Արդրբեջանի զինված ուժերը ստեղծում են ահաբեկչական խմբավորումների բազաներ:

Բերձորի ուղղությամբ և հարավային հատվածում որոշակի ոչ լայնամասշտաբ գործողություններ են ընթացել: Հակառակորդին չի հաջողվել առաջանալ դեպի Բերձորի ուղղություն: Այս ուղղությամբ մեր զինված ուժերի ստորաբաժանումներին հաջողվել է որոշակի դիրքային բարելավումներ իրականացնել:

Հյուսիսային ուղղությամբ հիմնականում վարվել է հրետանային կրակ, հրետակոծություն: Մասնավորապես՝ Մարտակերտ և ավելի հյուսիս ընկած ստորաբաժանումների ուղղությամբ:

Մարտական գործողությունները շարունակվել են նաև հարավային ուղղությամբ, տարվել են դիվերսիոն խմբերի չեզոքացման աշխատանքներ:

Հոկտեմբերի 29

Հոկտեմբերի 29-ին Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերի շնորհիվ, ԿԽՄԿ-ի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային թիմի մասնակցությամբ հայկական կողմին է փոխանցվել ռազմական գործողությունների ընթացքում երեսուն գոհված հայ զինծառայողների մարմինները:

Միաժամանակ, ԿԽՄԿ-ի ջանքերով Հայաստան է վերադարձվել մեկ քաղաքացիական անձ:

Արծրուն Հովհաննիսյանի հաղորդմամբ՝ հարավային հատվածում՝ Բերձորից մինչև Արաքսի ափն ընկած ռազմաճակատային բնագծի ուղղությամբ, եղել են որոշակի մարտական գործողություններ, հայկական ՋՈՒ-ին հաջողվել է որոշակի դիրքերի բարելավում իրականացնել:

Արցախի Մարտունու և Ասկերանի շրջանների գյուղերի հարակից տարածքներում շարունակվել են դիվերսիոն խմբերի դեմ ընթացող մարտական գործողությունները: Այդ մարտական գործողություններն ընթացել են Ավետարանոց և դեպի Սղնախ գյուղի տարածքում և հարակից բլուրներում ու անտառային զանգվածներում: Ամբողջ օրվա ընթացքում հրետակոծվել են Ստեփանակերտը և Շուշին, հիմնականում տուժել են ենթակառուցվածքները և նյութական վնաս է հասցվել խաղաղ բնակչությանը:

Հոկտեմբերի 30

Ամբողջ գիշերվա ընթացքում ՊԲ ստորաբաժանումները շարունակել են հակառակորդի խմբավորումների տեղաբաշխման շրջաններում լրահետախուզման և կրակային խոցման գործողությունները, որոնց շնորհիվ ոչնչացվել է մեծ քանակությամբ թշնամական զինամթերք և մարդկային ուժ:

Արցախի Հանրապետության նախագահ Արայի Հարությունյանը հայտնում է, որ Շուշին վտանգված է, որից հետո Երևանից և ՀՀ այլ բնակավայրերից քաղաքացիների

կողմից զանգեր են ստացվում կամավորագրման համար, ինչի արդյունքում ձևավորվում են կամավորական խմբեր և մեկնում ռազմաճակատ:

Արծրուն Հովհաննիսյանի հաղորդմամբ՝ թեժ մարտեր են ընթացել հարավային ուղղությամբ: Քարինտակ գյուղից արևելք ընկած մեկ երկու գյուղից մաքրվել են ադրբեջանական դիվերսանտները: Հայկական կողմը խոցել է թշնամու ևս 6 ԱԹՍ, 17 զրահատեխնիկա, պատճառել մարդկային 60 զոհ:

Ադրբեջանի հրետակոծության հետևանքով Արցախի Ակնաղբյուր գյուղում սպանվել է 60-ամյա Սերգեյ Բալայանը, 6 խաղաղ բնակիչ վիրավոր են:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ հյուսիսային ուղղությամբ ոչ երկարատև հրետանային պատրաստությունից հետո հետևակային ուժերով զրոհի փորձ է արվել մի քանի դիրքերի ուղղությամբ: Այստեղ ադրբեջանցիները կրել են լուրջ կորուստներ, հետ են շպրտվել՝ դաշտում թողնելով զգալի թվով դիակներ:

Հարավային ուղղությամբ՝ Արաքս գետից հյուսիս՝ մի քանի բարձունքների ուղղությամբ, Հայկական կողմն ունեցել է որոշակի դիրքային առավելություններ:

Կենտրոնական ուղղությամբ ընթացել են երկու առանձին պրոցեսներ. Մարտունի-Ճարտար ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերը փորձել են ճեղքել ռազմաճակատը: Դիրքային որևէ փոփոխություն չի եղել, բայց համառ մարտերը շարունակվել են: Իսկ Շուշիի մերձակա անտառապատ գյուղերի մոտ, չնայած հայկական կողմը լավ ցուցանիշներ է արձանագրել, սակայն այստեղ ևս մարտերը շարունակվել են:

Արցախի ՊԲ գերեվարել է զինյալ ահաբեկիչ, ով ներկայացել էր որպես Մըհրրաբ Մուհամմադ Ալ Շհայիր՝ Սիրիայի Համա քաղաքից, և ներկայացրել որոշ մանրամասներ իրենց հավաքագրման գործընթացի, «գյավուր» (անհավատների) դեմ պայքարի համար ակնկալվելիք ամսական վճարների և յուրաքանչյուր «անհավատի» գլուխ կտրելու համար «պարգևավճարների», ինչպես նաև իրենց կողմից իրականացվելիք ահաբեկչական ծրագրերի մասին:

Մինչ այդ Ժնևում մեկնարկել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հետ:

Հոկտեմբերի 31

Ադրբեջանը քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառների նկատմամբ, որտեղ պատսպարվում էին նաև խաղաղ բնակիչներ, կիրառում է ֆոսֆոր պարունակող զենք, որն ունի քիմիական զենքի տարրեր:

Հայկական զորքերի կողմից խոցվել են թշնամական 1 տանկ, 1 հետևակի մարտական մեքենա և 5 անօդաչու թռչող սարք:

Առավոտյան՝ ժամը 07:08-ի սահմաններում, հակառակորդը, խախտելով Ժնևում՝ խաղաղ բնակավայրերը չթիրախավորելու մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածությունը, հրթիռակոծել է Ստեփանակերտն ու Շուշին, ինչի հետևանքով քաղաքացիական բնակչության շրջանում կան վիրավորներ:

Կենտրոնական ուղղությամբ, մեկ-երկու դիրքերի վրա նետելով մեծաքանակ հետևակային և այլ ուժեր, զրահատեխնիկա, օգտագործելով հրետանի, ընդ որում՝

միաժամանակ հրետակոծելով Մարտունի քաղաքը, Ադրբեջանի զինված ուժերին հաջողվել է ունենալ որոշակի առաջխաղացում, որոշակի դիրքային փոփոխություն:

Հարավային և հարավարևելյան ուղղություններով ընթացող առանձին օջախային մարտերում ՊԲ-ն կարողացել է հետ վերցնել որոշակի դիրքեր և ապահովել որոշակի առաջխաղացում:

Նոյեմբերի 1

Գիշերն անհանգիստ է եղել Արցախի Մարտունի քաղաքում և հարակից բնակավայրերում: Քաղաքի վրա Ադրբեջանի կողմից կիրառվել է ռազմական ավիացիա: Ռմբակոծության հետևանքով կան բազմաթիվ ավերածություններ: Գիշերը հրետակոծել է Ակերանի վերին ենթաշրջանի գյուղերը: Գրադ և ամերչ կայանքներից թշնամին կրակ է բացել Ավետարանոց և Սգնեք համայնքների ուղղությամբ:

ՊԲ հաղորդմամբ՝ գիշերվա ընթացքում մարտերը շարունակվել են հարավ-արևմտյան, հարավ-արևելյան և հյուսիսային ուղղություններում: Մարտական գործողություններին զուգահեռ թշնամական ուժերը շարունակել են թիրախավորել խաղաղ բնակավայրերը, մասնավորապես հրթիռահրետանային հարվածներ հասցնելով Մարտունի, Շուշի քաղաքներին և Քարին տակ գյուղին: Նշված ուղղությունների վրա աշխատող հակառակորդի կրակային դիրքերին ՊԲ ստորաբաժանումների կողմից հասցվել են թիրախային հարվածներ: Թշնամական ուժերը շուրջ 10 միավոր տեխնիկայի միջոցով առաջանալու փորձ են ձեռնարկել Ավետարանոց-Սղնախ հատվածում, սակայն, խոցվելով բանակային ուժերի կողմից և կրելով մեծաթիվ կորուստներ, հաջողության չեն հասել: ՊԲ-ին հաջողվել է զուշակել հակառակորդի հավանական գործողությունները և նրանց առաջ եկող շարասյուներն ու կենդանի ուժը ոչնչացնել մեկ վայրում:

Ժամը 20:30-ից 23:40-ն ընկած ժամանակահատվածում թեժ մարտեր են ընթացել ադրբեջանա-արցախյան ճակատային գծի հյուսիս-արևմտյան հատվածում: Մասնավորապես, ՊԲ երկու հանգուցային դիրքի ուղղությամբ ադրբեջանական կողմը վաշտի կազմով ձեռնարկել է հարձակում, որը կասեցվել է: Թշնամին մեծ կորուստներով դիմել է փախուստի: Փախչող հակառակորդը արգելափակվել է ձորերից մեկում, և հայկական ուժերը ականանետային կրակով շարունակել են վերջինիս լիակատար ոչնչացման գործողությունը: Նույն ուղղությամբ ադրբեջանցիները ևս մեկ հարձակում են ձեռնարկել դասակի կազմով, որը նույնպես ՊԲ-ի կողմից կասեցվել է: Հայկական ստորաբաժանումները հետապնդել են փախչող թշնամուն և ոչնչացրել նրան:

Արցախի Պաշտպանության բանակի ստորաբաժանումների կողմից գերեվարվել է Ադրբեջանի կողմից Արցախի դեմ ռազմական գործողությունների համար ներգրավված օտարերկրյա զինյալ երկրորդ ահաբեկիչը, ով ներկայացել է որպես Սիրիայի Իդլիբ նահանգի Ջիսր ալ-Շուղուր շրջանի Ջիյադիյա գյուղի բնակիչ Յուսուֆ Ալաաբեթ ալ Հաջի: Նա ներկայացրել է որոշ մանրամասներ իրենց հավաքագրման գործընթացի, «գյավուր» (անհավատների) դեմ պայքարի համար ակնկալվելիք ամսական վճարների և յուրաքանչյուր «անհավատի» գլուխ կտրելու համար «պարգևավճարների», ինչպես նաև իրենց կողմից իրականացվելիք ահաբեկչական ծրագրերի մասին:

Նոյեմբերի 2

Գիշերվա ընթացքում արցախա-ադրբեջանական ճակատային գծում տարբեր ինտենսիվությամբ ընթացել են մարտական գործողություններ: Որոշ ուղղություններում ծավալվող թշնամական շարասյուները հայտնաբերվել և ոչնչացվել են ՊԲ ստորաբաժանումների կողմից: Ադրբեջանը շարունակել է նաև հրթիռահրետանային հարվածներ հասցնել խաղաղ բնակավայրերին:

Գրադի և ամերչի կայանքներից խաղաղ բնակավայրերի ուղղությամբ արձակված հրթիռներից բացի, Մարտունի և Մարտակերտ քաղաքներում Ադրբեջանը կիրառել է նաև ռազմական ավիացիա: Ըստ՝ Մարտունու շրջանի Նոգի համայնքի ղեկավարի՝ թշնամին մշտական նշանառության տակ է պահում Նոգին ու հարակից տարածքները:

Ժամը 18:10-ի սահմաններում ադրբեջանական կողմը հրետանային միջոցներից կրակ է վարել ՀՀ ՊՀՈ մարտական դիրքերի և Դավիթ Բեկ բնակավայրի ուղղությամբ, ինչի հետևանքով մեկ բաղաքացիական անձ զոհվել է, ևս երկուսը՝ վիրավորվել:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ հարձակումները իրենց ուժգնությամբ տարբերվում էին նախորդ օրերի հարձակումներից: Մարտունու ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերին հաջողվել է վերցնել մեկ երկու դիրք. Մարտունիից հարավ՝ Ճարտարի ուղղությամբ:

Ադրբեջանի կողմից կիրառվել է ավիացիա, մի քանի բնակավայրեր ռմբակոծվել են, այդ թվում՝ Դավիթ Բեկ գյուղի ուղղությամբ:

Թշնամու՝ ապիտակ ֆոսֆոր պարունակող զենքի կիրառման հետևանքով շարունակում են վառվել համայնքապատկան անտառային ծածկույթները: Այն կազմում է ավելի քան 150հա տարածք:

Նոյեմբերի 3

Ադրբեջանական կողմը հրետանային կրակ է վարել հայկական ստորաբաժանումների ուղղությամբ: Արկերից մի քանիսը ընկել է Իրանի տարածք:

Քարվաճառի ուղղությամբ ժամը 13:30-ին, օգտագործելով ծխային արկեր, հակառակորդը փորձել է ձորից դուրս բերել նախորդ օրվա ընթացքում իր զոհված զինծառայողների դիերը: Սակայն հայկական կողմի հրանոթային և ականանետային կրակի արդյունքում հետ է շպրտվել՝ թողնելով ևս երկու դի: Նույն ուղղությամբ ժամը 13:40-ին ադրբեջանական ուժերը, միջդիրքային տարածքում ծխաքողարկվելով, 30 հոգանոց խմբով փորձել են ձեռնարկել ներթափանցման փորձ: Այս դեպքում ևս, ՊԲ ստորաբաժանումները կասեցրել են հակառակորդի առաջխաղացումը, ինչի արդյունքում վերջիններս, կորուստներ կրելով, նահանջել են ելման դիրքեր: Ժամը 14:30-ին, կրկին Քարվաճառի ուղղությամբ, նկատվել է հակառակորդի կուտակում մարտական դիրքերի շրջանում: Հայկական ուժերը հավաստանշել են Ադրբեջանական ուժերի կուտակման փորձերը և ոչնչացրել պատսպարվելու փորձ կատարող հակառակորդի 4 զինծառայողի:

Օրվա ընթացքում Ադրբեջանական ուժերը ռազմական ավիացիա են կիրառել Մարտունի քաղաքի ուղղությամբ, հրետակոծել Շուշի քաղաքը: Իսկ Շահումյանի շրջանում կիրառել են PC3O տեսակի հրթիռ:

ժամը 14:10-ի սահմաններում ՊԲ ստորաբաժանումների կողմից ոչնչացվել է Ադրբեջանական ուժերի 2 տանկ, ինչպես նաև առգրավվել 1 հետևակի մարտական մեքենա: Ինտենսիվ մարտական գործողություններ են ընթացել ճակատային գծի արևելյան և հարավ-արևելյան ուղղություններում:

Գրեթե բոլոր ուղղություններով ադրբեջանական զինված ուժերը՝ հրոսակախմբերի, վարձկանների հետ շարունակել են հարձակողական գործողությունները: Թաղավարդ գյուղի ուղղությամբ ոչնչացվել է դիվերսիոն խումբ:

Մարտունիից հարավ ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները՝ զրահատեխնիկայի, օդուժի, հրետանու աջակցությամբ, փորձել են հարձակում զարգացնել: Կորցնելով մի քանի զրահատեխնիկա և զգալի թվով կենդանի ուժ՝ հետ են շպրտվել ելման բնագծեր:

«Սմերչ» կայանից հրթիռակոծվել է Ստեփանակերտ և Շուշի քաղաքները: Եղել են տուժածներ: Ստեփանակերտում թիրախավորվել է մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնը:

Նոյեմբերի 4

Կեսգիշերից հետո թշնամական դիվերսիոն խումբը փորձել է հաջողության հասնել Շուշիի ուղղությամբ, սակայն, հանդիպելով բանակային ստորաբաժանումների և կամավորականների կազմակերպված դիմադրությանը և կրելով մեծաթիվ կորուստներ, հետ է շպրտվել:

Ժամը 10:30-ի սահմաններում, Բերձոր քաղաքից հարավ-արևելք ընկած ճակատային գծի հատվածում ադրբեջանական ուժերը զրահատեխնիկայի ներգրավմամբ նախաձեռնել են հերթական հարձակումը: ՊԲ ստորաբաժանումները, անցնելով պաշտպանության, խոցել են հակառակորդի 3 տանկ, կասեցրել թշնամու հարձակումը:

Ժամը 12:55-ի սահմաններում հակառակորդը նույն ուղղությամբ ձեռնարկել է հերթական հարձակումը և, կորցնելով ևս 2 տանկ ու 2 հետևակի մարտական մեքենա, դարձյալ հետ է շպրտվել ելման դիրքեր:

Ադրբեջանական դիվերսիոն խմբերի ներթափանցման ուղղություններում հայկական ուժերի որոնողական աշխատանքների պատճառով քաղաքացիական բնակչության համար ժամանակավորապես փակվում են Շուշի-Բերձոր ճանապարհի որոշ հատվածներ:

Ժամը 21:00-ի սահմաններում Մեծ Մասրիկ-Սոթք հատվածում խոցվել է ադրբեջանական երրորդ ԱԹՍ-ն: Չորրորդ ԱԹՍ-ն խոցվել է ժամը 21:30-ի սահմաններում Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի տարածքում:

Նոյեմբերի 5

Ադրբեջանական ուժերը առանձնակի ակտիվություն են դրսևորել արևելյան, հարավ-արևելյան ու հարավային ուղղություններում: Հակառակորդի զրոհային խմբերի կողմից ձեռնարկված բազմակի զրոհները ՊԲ ստորաբաժանումների կողմից հաջողությամբ կասեցվել են: Հակառակորդը կրել է մարդկային ուժի և զինտեխնիկայի լուրջ կորուստներ: Ադրբեջանական ուժերը երկու զրոհային խմբերի կազմով

հարձակման փորձ են ձեռնարկել նաև հյուսիսային հատվածում, որոնք ժամանակին հավաստանշվել և ոչնչացվել են բանակային ստորաբաժանումների կողմից:

Ժամը 10:30-ի սահմաններում, թշնամական ուժերը արևելյան հատվածում, զրահապատ մեքենաների կիրառմամբ, ձեռնարկել են հարձակման փորձ:

ՊԲ ստորաբաժանումների ու պահեստազորայինների գրագետ գործողությունների արդյունքում՝ հակառակորդը, մարտադաշտում թողնելով 1 զրահամեքենա, 1 բեռնատար մեքենա և մեծ քանակությամբ կենդանի ուժ, հետ է շպրտվել:

ՊԲ հաղորդմամբ՝ Քարին Տակի և Լիսագորի հատվածներում նկատված փոքր խմբերը ոչնչացվել են հայ դիպուկահարների և այլ կրակային միջոցների կրակով: Շուշիի ուղղությամբ նկատվել է հակառակորդի զրահամեքենաների կուտակում, որը ևս ՊԲ ստորաբաժանումների կրակով ոչնչացվել է:

Օրվա ընթացքում հրետակոծվել են Բերձոր և Շուշի քաղաքները՝ հարակից բնակավայրերով: Ադրբեջանի գինված ուժերը հյուսիսային, հարավային, կենտրոնական ուղղությամբ, Կարմիր շուկայի հատվածում, փոքր գրոհող խմբերով, նվազագույն քանակի զրահատեխնիկայով, հրետանու կրակի աջակցությամբ փորձել են նորից առաջ գալ, սակայն հետ են շպրտվել՝ կրելով որոշակի կորուստներ:

Ըստ Արծրուն Հովհաննիսյանի՝ Ադրբեջանական դիվերսիոն խմբեր են եղել Շուշի քաղաքի մերձակա համայնքներում, անտառներում, ճանապարհներին, ձորակներում և այլուր:

Նոյեմբերի 6

Նոյեմբերի 5-ին լույս 6-ի գիշերը խաղաղ բնակավայրերում անհանգիստ է եղել: Կան տուժածներ: Ադրբեջանաթուրքական ուժերն ամբողջ գիշեր ինտենսիվ կրակի տակ են պահել Շուշի և Ստեփանակերտ քաղաքները: Ստեփանակերտը հրթիռակոծվել է կասետային ռումբերով:

ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումները ժամը 11:30-ի սահմաններում հարավարևելյան ուղղությամբ խոցել են հակառակորդի ԱԹՍ:

Շուշիի ուղղությամբ Ադրբեջանի գրոհային խմբերի բազմակի հարձակման փորձերը նույնպես կասեցվել են: Հակառակորդը լուրջ կորուստներ է կրել նաև հարավ-արևմտյան՝ Բերձորի հատվածում:

Արծրուն Հովհաննիսյանը նոյեմբերի 5-ը և 6-ը անվանել է Շուշիի պաշտպանության փայլուն օրեր:

Նոյեմբերի 7

ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումներն արևելյան ուղղությամբ ժամը 06:45-ի սահմաններում խոցել են հակառակորդի ԱԹՍ: Շուշին շարունակել է ողջ գիշեր հրթիռակոծվել: Օրվա ընթացքում հրթիռակոծվել է նաև Ստեփանակերտը գրադի և ամերչի կայանքներից:

Նոյեմբերի 6-ին և լույս 7-ի գիշերը ճակատային գծի բոլոր հիմնական ուղղություններում մարտական գործողությունները շարունակվել են: Առավել համառ ու ինտենսիվ մարտեր են ընթացել Շուշի-Քարին տակ հատվածում: Բանակային ստորաբաժանումները հաջողությամբ կասեցրել են թշնամական ուժերի հարձակման

բազմակի փորձերը՝ ոչնչացնելով մեծ քանակությամբ մարդկային ուժ: Նշված ժամանակահատվածում առանձնահատուկ արդյունավետությամբ աչքի են ընկել հատկապես ՊԲ հրետանային ստորաբաժանումները:Հարավ-արևելյան և հարավային ուղղություններում հայկական ուժերի կողմից խոցվել է նաև թշնամական ուժերի անձնակազմ տեղափոխող 2 միավոր ավտոտեխնիկա և 4 ԱԹՍ:Շուշիի հարակից տարածքներում, բուն քաղաքի մոտակայքում՝ ճանապարհների ուղղությամբ, Ադրբեջանի զինված ուժերին հաջողվել է մոտենալ: Մարտեր են ընթացել նաև Բերձորի և Մարտունու շրջաններում: Ինչպես հետագայում նշում է Արայիկ Հարությունյանը, նոյեմբերի 7-ին հայկական կողմը կորցրել էր վերահսկողությունը Շուշիի նկատմամբ, բայց, չնայած դրան, մարտերը շարունակվում էին:

Նոյեմբերի 8

Նոյեմբերի 7-ին և լույս 8-ի գիշերը փոփոխական ինտենսիվությամբ մարտերը շարունակվել են ճակատային գծի բոլոր ուղղություններում: Առավել համառ գործողություններ են ծավալվել Շուշիի մերձակայքում և հարավարևելյան հատվածում: Տարբեր ուղղություններում ծավալված մարտերի ընթացքում ոչնչացվել է Ադրբեջանի մեծաթիվ կենդանի ուժ, 4 տանկ, 20 միավոր այլ զրահատեխնիկա, 11 միավոր ավտոտեխնիկա, 2 ԱԹՍ:

ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումներն արևելյան ուղղությամբ ժամը 09:30-ի սահմաններում խոցել են ադրբեջանական երկու ԱԹՍ:

Ժամը 18:30-ին մոտ հրթիռակոծվել է Ստեփանակերտը: Ադրբեջանը Մարտակերտ քաղաքի վրա փորձել է կիրառել ռազմավիացիա: Մարտունի քաղաքում իրադրությունը ևս անհանգիստ է եղել: Այստեղ կեսօրին ադրբեջանական կողմը ծանր հրետանի է կիրառել՝ հարվածել քաղաքացիական ենթակառուցվածքներին: Ասկերանի, Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում՝հարաբերական հանգիստ իրավիճակը պահպանվել է: Շուշի քաղաքի մեջ և հարակից տարածքներում՝ պարիսպների տակ, ճանապարհների վրա, որոնք տանում են դեպի Շուշի, սաստիկ մարտեր են ընթացել ողջ օրվա ընթացքում: Ադրբեջանի զինված ուժերը մի քանի անգամ փորձել են ճեղքել և դուրս գալ դեպի Բերձոր՝ հավանաբար փորձելով այդ ուղղությամբ օգնության հասնել Շուշիում կռվող իրենց ստորաբաժանումներին: Սակայն կրելով զգալի կորուստներ, հետ են շպրտվել, ավելին՝ դիմել են փախուստի: Շուշիի համար շարունակվել է ճակատամարտը:

ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումները Ստեփանակերտից հյուսիս արևմուտք հատվածում ժամը 19:30-ի սահմաններում խոցել են հակառակորդի երկու ԱԹՍ: Առաջնագծում եղել է հրետանային և ականանետային փոխհրաձգություն: Հարավարևելյան ուղղությամբ դիտարկվել է հակառակորդի շարասյուն, որի ուղղությամբ վարվել է դիպուկ կրակ՝ ոչնչացնելով մեծ քանակի կենդանի ուժ և տեխնիկա:

Նոյեմբերի 9

Կեսգիշերից հետո Ադրբեջանը կասետային հեռահար մի քանի հրթիռ է արձակել Ստեփանակերտի ուղղությամբ, վնասել քաղաքացիական ենթակառուցվածքները:

Ըստ Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ Կարմիր շուկայի ուղղությամբ թշնամու՝ ժամը 14:20-ին ձեռնարկած գրոհը կասեցվել է: Հարավարևելյան ուղղությամբ մարտերը շարունակվել են, ժամը 12:10-ից 14:50-ն ընկած

ժամանակահատվածում խոցվել է հակառակորդի 3 ԱԹՍ: Հակառակորդը մարտական գործողություններ է ձեռնարկել նաև ռազմաճակատի այլ ուղղություններով: Հայկական զորքերը որոշ հատվածներում զբաղեցրել են առավել նպաստավոր բնագծեր:

Օրվա ընթացքում տարբեր ուղղություններում ոչնչացվել է թշնամական ուժերին պատկանող 1 տանկ, 4 ավտոտեխնիկա, 8 ԱԹՍ:

Ժամը 18:39-ին Ադրբեջանի Հանրապետության տարածքից դյուրակիր շարժական զենիթահրթիռային համալիրից արձակված կրակից Հայաստանի Հանրապետության օդային տարածքում՝ Երասխ գյուղից Պարույր Սևակ գյուղ տանող հատվածում՝ ձորում, խոցվել է ռուսական Մի-24 ուղղաթիռ: Եղել է 2 զոհ:

Ժամը 23:00-ին Ադրբեջանի ԶՈՒ-ը, իմանալով պատերազմի մոտալուտ ավարտի մասին, ամբողջ ուժով հարձակում գործեցին Մարտունու ուղղությամբ:

Նոյեմբերի 9-ի, լույս 10-ի գիշերը, ժամը 00:00-ին Հայաստանը, Ադրբեջանը և Ռուսաստանը հանդես են գալիս համատեղ հայտարարությամբ:

Եզրակացություն

Վատ բան է պատերազմը, թե լավ, բայց փաստն այն է, որ 44 օրյա պատերազմը կայծակի պես եկավ մաքրելու թուխպերը Հայոց աշխարհի երկնքից, մաքրելու ծանր, հեղձուցիչ ներքին մթնոլորտը, վառ լույս նետելու մեր տուն-ամրոցի բոլոր անկյունները, չթողնելու խավարի ոչ մի ծվեն՝ մեր Հայրենական հարկի ներքո:
44 օրյա պատերազմը իր հրթիռների ու արկերի պայթյունների լույսի ներքո բազում ճշմարտություններ բացահայտեց...:Այդ ճշմարտությունները մինչև այդ էլ կային, սակայն ճանապարհ չէին ստանում...: Արդյունքում սկսվեց զինված ուժերի մաքրման գործընթացը..., իսկ առանց դրա չի կարող տեղի ունենալ ընդհանրապես Հայոց պետության մաքրման, հզորացման և նոր բարձր տեխնոլոգիական պատերազմների տարածաշրջանում մարտունակ ու հուսալի բանակ ստեղծելու գործընթացը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվել է, 44 օրյա պատերազմի մասին կան շատ վերլուծական աշխատանքներ, նյութեր տարբեր թերթերում և ամսագրերում: 44 օրյա պատերազմը ցույց տվեց մեր երիտասարդ զինվորների ու սպաների հայրենասիրությունը, սեփական երկիրը պահելու և պահպանելու պատրաստակամությունը, որը կարող է օրինակ ծառայել հաջորդ սերունդներին: Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկում եմ թեման ընդգրկել ուսումնական ծրագրերի մեջ, ինչպես նաև պատմության և նախնական զինվորական պատրաստության դասագրքերի մեջ՝ որպես առանձին ուսումնասիրվող թեմա 9-րդ դասարաններում:

Օգտագործված գրականության ցանկ

1. http://www.yerkir.am
2. Արծրուն Հովհաննիսյան՝ Yelaket.am
3. www.mediamax.am
4. Սերգեյ Մինասյան՝ ,,Անդին,, ISSN 1829-3611, 4.04.2016թ.
5. Մնացական Խաչատրյան՝ ,,Արցախի 2016թ. ,,պատերազմների էվոլյուցիան,, , ,,Անդին,, ISSN 1829-3611, 4.04.2016թ.